«ԳՕԼԴՇԻՆ» ՍՊԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Աճանան բնակավայրի վարչական տարածքում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

21.06.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /03.05.2023թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի հունիսի 18-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ «ԳՕԼԴՇԻՆ» ՍՊԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Աճանան բնակավայրի վարչական տարածքում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի բնապահպան Արմինե Գաբրիելյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի վերահսկող ինժեներ՝ Նորայր Կարապետյանը «ԳՕԼԴՇԻՆ» ՍՊԸ աշխատակիցներ, «Գլոբալ պրոյեկտ» ՍՊԸ աշխատակիցներ, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի **2024 թվականի մայիսի 15-ի թիվ 084 (7085) համարում**, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «ԳՕԼԴՇԻՆ» ՍՊԸ ինժեներ Վիգեն Սարգսյանին:

Զեկույց (Վիգեն Սարգսյան) – Ուրեմն հող է հատկացվել Աճանանում: Մենք կատարել ենք ինժեներագեոդեզիական հանույթ տեղանքում և հորատման միջոցով գտել ենք, որ նպատակահարմար չէ այդ տարածքում կատարել, իրականացնել այդ շինարարությունը: Այժմ նոր տեղ է հատկացվել, որ կատարենք ուսումնասիրություններ, ինժեներաերկրաբանական հետազոտություններ 144 տեղ հզորությամբ, ինչպես ասվեց և 40 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման համար:

Հարց (Նորայր Կարապետյան) – Ճիշտ հասկացա՞նք, որ գեոդեզիական աշխատանքների իրականացման ժամանակ ի հայտ է եկել, որ տեղանքում նպատակահարմար չէ...

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Նպատակահարմար չէ:

Հարց (Նորայր Կարապետյան) – Նպատակահարմար չէ, թե՞ հնարավոր չէ: Այսինքն չի կարելի՞, գեոլոգիան ի՞նչ ցուցում է ներկայացրել:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Գեոլոգիան ցուցում է ներկայացրել, որ հնարավոր չէ:

Հարց (Նորայր Կարապետյան) – Հնարավոր չէ, գրունտները չեն համապատասխանում, այսինքն տեղանքում տեղակապել և դպրոց կառուցել: Ճի՞շտ հասկացա:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Այո:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Այդ մասին ես ավելի լավ կասեմ: Անունս Մյասնիկ է, ես «Գլոբալ պրոյեկտ» ընկերությունն եմ ներկայացնում: Տեսեք, ուրեմն հողը երբ հատկացվել է առաջին իսկ օրվանից հողի վրա նախագիծ ենք իրականացրել և եզրահանույթ է հանվել, որի հիման վրա ցույց ենք տվել քննարկել ենք: Եկել ենք այն եզրակացության, որ հողը շատ անհարմար է, իհարկե հնարավոր է, յուրաքանչյուր պայմաններում շինարարություն իրականացնել, բայց առաջինը այդ շինարարությունը բավականին թանկարժեք կլինի, ինչի՞, որովհետև այդ հատվածում ռելիեֆն այսպես է և վերևից հաստատ ձնհալի, տեղումների ժամանակ ջրային հոսքեր են լինելու: Այնտեղ հիմքերի լրացուցիչ հզորացում է պետք, դրենաժային համակարգ է պետք դա մեկ, և երկրորդ մասով ճանապարհից մինչև դպրոցը երբ որ մենք տեղադրում էինք 18 մ անկում կար: Այդ 18 մ սակավաշարժ խմբերի համար հասանելություն ապահովելը բավականին բարդ է ու թանկարժեք: Այսինքն այնտեղ բազում հենապատեր էին առաջանում: Մենք այդ հարցը բարձրացել էինք վերջին անգամ, որ հանդիպում եղավ մարզպետարանում, որտեղ թե՛

մարզպետն էր ներկա, թե՛ համայնքի ղեկավարը, թե՛ վարչական ղեկավարները և թե՛ Ձեր տարածքային կառավարման հիմնադրամի նախագահն էր, քաղշինից մարդիկ կային:

Լրացում (Նորայր Կարապետյան) – Ես ներկա էի, գիտեմ:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Այդ ժամանակ մենք դա ներկայացրեցինք ու որոշում կայացվեց ամենայն հավանականությամբ հողը փոխենք: Հիմա ես տեղեկացա շինարարական ընկերությունից, որ հողը փոխվել է, այլ հող է տրամադրվել, այսինքն պետք է դա դեռ նայել: Այնտեղ հետազոտություն անել, գեոդեզիական, գեոլոգիական և հասկանանք այդ հողը հարմար է, թե ոչ:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Դուք ո՞ր կազմակերպությունն եք ներկայացնում:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Ես «Գլոբալ պրոյեկտ» ընկերությունն եմ ներկայացնում:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Դուք նախագծո՞ղն եք:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Այո:

Հարց (Նորայր Կարապետյան) – Պարոն Թադևոսյան մեկ հարց Ձեզ եթե կարելի է: Նոր հող, որ ասում են հատկացվել է նոր տեղանքի մասին, ըստ Ձեզ հարթ տարա՞ծք է, հնարավո՞ր է կառուցել, որ գյուղից հեռու չլինի:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Ես անկեղծ դեռ չեմ հասցրել տեսնեմ: Կարող է ինչ-որ ուսումնասիրություն է արվել, կարծում եմ դուք ավելի լավ կպատասխանեք:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Մենք էլ դեռ չենք տեսել:

Լրացում (Գոռ Թադևոսյան) – Կարծում եմ այս խնդիրները հաշվի է առնվել նոր հող հատկացման ժամանակ և խոսքը գնում է Ձեր այս գրությունում նշված 0.71 հա հողի մասին: Այո՞ ճիշտ եմ հասկանում:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Այո:

Լրացում (Գոռ Թադևոսյան) – Որպես դպրոցի կառուցման համար հատկացված: Իսկ դուք տարածքին ծանոթացել եք գոնե ակնադիտական ուսումնասիրություն տեղում իրականացրե՞լ եք:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Այո տեղում ուսումնասիրվել է, գեոդեզիական հանույթ կատարվել է:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Արդեն կատարվել է և սպասում եք արդյունքների՞ն:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Գեոլոգիան արել ենք այդ տեղանքում:

Լրացում (Գոռ Թադևոսյան) – Նոր հողի մասին է խոսքը:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Ոչ նոր հողը դեռ չենք տեսել: Հին հողի մասին եմ խոսում: Նոր հողը մենք դեռ չենք տեսել:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Հատկացումը ե՞րբ է կատարվել: Դուք ե՞րբ եք տեղյակ եղել, որ նոր հողը հատկացվել է:

Պատասխան (Վիգեն Սարգսյան) – Ես երեկ եմ տեղյակ եղել:

Պատասխան (Արմեն Մարտիրոսյան) – Պարոն Թադևոսյան չի կարա հատկացում կատարված լինի: Դա քաղաքաշինության վարչությունից է կատարվում: Միգուցե այն հին հողի մասին է խոսքը:

Լրացում (Նորայր Կարապետյան) – Ճիշտն ասած վերջին անգամ այց է կատարվել, ես մյուս տեղակալի հետ այնտեղ եմ եղել, տրվել է ներկա հողի շարունակությունը, բայց ոնց հասկանում եմ դա էլ չէ համապատասխանում: Այսինքն՝ նոր այլ հող է հատկացվել: Ճի՞շտ եմ հասկանում:

Խոսք (Արմինե Գաբրիելյան)- Նախատեսվում է երկու հանրային լսում: Այսօր իրականանում է 1-ին հանրային լսումը: Իրականացվում է պատրաստի նախագծված դպրոցի տեղակապում: Կարող ենք այսպես արձանագրել, համարել կայացած, իսկ մնացած հարցերը կքննարկվեն մյուս հանրային լսմանը, որը կիրականացվի փորձաքննության կենտրոնի կողմից: Բոլոր մնացած հարցերը՝ հողհատակացումով և այլն այդ ժամանակ կներկայացվեն:

Լրացում (Նորայր Կարապետյան)- Խնդիրը նրանում է, որ ևս 21 աշխատանքային օր չձգձգելու համար, հանրային քննարկումը ներկայացնենք, թե ինչ է իրականացվելու այդ դպրոցի մասով՝ մինչ հողի գեոլոգիական պատասխանը կգա և տեղանքի հիմնավորումը կգա և քննարկումը համարենք կայացած:

Խոսք (Արմինե Գաբրիելյան)- Սա իրականում հանրությանը տեղեկացնելու մասին է, որ այսպիսի դպրոց է կառուցվելու և շինարարության ընթացքում, թե ինչ բնապահպանական և սոցիալական խնդիրներ կարող են առաջանալ, օրինակ՝ աղմուկը, թրթռումը, փոշին: Քննարկման վերաբերյալ հայտարարությունը տեղադրված էր «Առավոտ» օրաթերթում: Արձանագրությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում կներկայացվի համայնքի ավագանուն, իսկ ավագանին 30 աշխատանքային օրվա ընթացքում կկայացնի իր նախնական համաձայնությունը գործունեության վերաբերյալ, իսկ մյուս հարցերը կարող ենք քննարկել երկրորդ հանրային լսմանը:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Իսկ նախագծողը կարո՞ղ է մանրամասն երկայացնել ի՞նչ է նախագծվում: Բացի 144 տեղ միջնակարգ դպրոցի և 40 տեղ մանկապարտեզի, ինչպիսի՞ շինություն է, ի՞նչ մասնաշենքեր է ունենալու:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Ուրեմն՝ շենքն իրենից ներկայացնում է 70*40 ի վրա շինություն: 1-ին մասնաշենքը մանկապարտեզն է՝ մեկ հարկանի, 2-րդ մասնաշենքը՝ ուսումնական մասն է՝ եռահարկ, որից մեկը նկուղային հարկն է լինելու, որը ծառայելու որպես պարզագույն թաքստոց և 3-րդը՝ լինելու է սպորտային և հանդիսությունների դահլիճը: Դա բարձր առաստաղով, մեկ հարկանի շինություն է է լինելուև տանիքը ծածկվելու է մետաղական կոնստրուկցիայով: Դրանից բացի նաև լինելու են օժանդակ շինություններ՝ կաթսայատուն, ենթակայան հավանաբար: Կարող է ենթակայան չլինի ուղղակի տրանսֆորմատոր լինի: Լինելու է անպայման ֆոտովոլտային կայան: Այստեղ առաջադրանքի ամբողջ դպրոցի, այսինքն ծախսը փակելու համար, եթե 100կվ է, ապա 100կվ հզորությամբ ֆոտովոլտային կայան պետք է լինի, պլյուս պետք է լինեն ջրատաքացուցիչներ՝ նույնպես ամբողջ հզորությունը փակելու համար:

Լրացում (Արմինե Գաբրիելյան) – Կներեք, եթե կարելի է ես ավելացնեմ դպրոցը կառուցվում է միջազգային չափանիշներին համապատասխան նախատեսված են լինում հաշմանդամների համար հատուք թեքահարթակներ, եթե չեմ սխալվում վերելակ, ամբարձիչներ են լինում, սեյսմակայուն են լինելու ու նշեմ, որ այս նախագծերն արդեն անցել են փորձաքննություն, կատարվում է տեղակապում:

Հարց (Նորայր Կարապետյան) – Միջազգային և համալիր փորձաքննություններ մենք ունենք նաև Կապան քաղաքում կառուցվող նմանատիպ դպրոց ու հիմնականում պահպանվում են բոլոր տեսակի նորմերը: Եվ ՀՀ և միջազգային, որովհետև երկու անգամ փորձաքննության է անցնելու: Ուղղակի մեկ հարց Ձեզ, որպես նախագծող: Մուտքերը դպրոցի և մանկապարտեզի տարանջատվա՞ծ են, թե մեկ մուտք է լինելու:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Անպայման, մենք միշտ տարանջատում ենք:

Հարց (Նորայր Կարապետյան) – Ուղղակի դա կարևոր է: Այսինքն իրար չե՞ն խանգարելու:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Երեխաների հոսքերի հանդիպում ընդհանրապես չի լինելու:

Լրացում (Արմինե Գաբրիելյան) – Ուղղակի մասնաշենքերը իրար միացված են:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Մասնաշենքերը միացված են: Այնտեղ կա մուտք, բայց մուտքը նրա համար է, որպեսզի ճաշարանի անձնակազմը մուտք ունենա դեպի մանկապարտեզի խմբասենյակներ:

Հարց (Նորայր Կարապետյան) – Երեխաները կարող են իրար հետ շփվել, ուղղակի ուզում ենք հասկանալ իրենց մուտքերը տարբեր են, թե նույն մուտքով են գնում, օրինակ դասամիջոցներին իրար չխանգարեն: Թե չէ երեխաները կարող են իրար հետ շփվել: Մեկի եղբայրն է, մեկի քույրն է այդ դպրոցում: Ուղղակի ուզում ենք հասկանալ մուտքերը առանձին են, թե չէ մանկապարտեզի և դպրոցի:

Հարց (Արմեն Մարտիրոսյան) – Ապաստարան լինելո՞ւ է:

Պատասխան (Մյասնիկ Գրիգորյան) – Իրավաբանորեն ապաստարանը ճիշտ չէ, ինքը պարզագույն թաքստոց է: Պարզագույն թաքստոցը ի՞նչ է ենթադրում: Ինքը պետք է ամբողջությամբ լինի հողի տակ և պետք է համալրված լինի բոլոր անհրաժեշտ միջոցներով՝ օդափոխությամբ, բժշկի սենյակ, ռազմագիտության սենյակ:

Լրացում (Արմինե Գաբրիելյան) – Իրենք իրականում անունը նկուղ են ասում, եթե չեմ սխալվում, բայց անհրաժեշտության դեպքում ծառայում է որպես ապաստարան:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Այլ հարցեր: Շնորհակալություն հարցերի և մեկնաբանությունների համար: Ես կխնդրեմ վերջում ընկերությանը հաջորդ հանրային լսմանը մեզ ներկայացվի նաև հողի ուսումնասիրությունների հետ կապված արդյունքները և մյուս հանրային լսմանը Ձեզնից ակնկալում ենք ավելի մանրամասն մեկնաբանության ներկայացում: Շնորհակալություն եմ հայտնում հանրային լսման մասնակիցներին և հանրային լսումը համարենք կայացած:

Հանրային քննարկման վարող՝
Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Նախաձեռնող՝
«ԳՕԼԴՇԻՆ» ՍՊԸ տնօրեն **Նարեկ Հակոբյան**